

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՈՐԱԿՐԱԿԱՆ

— Արեւմտեան Քաղաքակրթութիւնն ու իր ճակատագիրը.

Երես

113

ԿԻՕՆԱԿԱՆ

— Հայաստանաց Եկեղեցին (9).

Ե. Վ. Տ.

117

— Ժամանակին հետ.

Ե. Վ. Տ.

119

— Խօսքեր երջանկութեան մասին.

X

121

ԲԱՆԱՍՏԵՂԺԱԿԱՆ

— Աւերակ գիւղիս.

ԱՐԱ ԶՈՎԱՆ

124

— Տո՛ւր մեզի Տէր...

ԳՕՇԱՐ

126

— Օտարականը.

Ե.

127

— Դուրսը հոյ՛ ու անձրեւ.

Մ. Մ.

128

ՀԻՆ ԵՂԵՐ

Հրատ. Ն. Վ. ԾՈՎԱԿԱՆ

125

ԱՌՕՐԵԱՅ ՀԱՐՑԵՐ

— Միտք եւ Սիրտ.

Ե. ՕՇԱԿԱՆ

129

ՊԼՏՄԱԿԱՆ

— Կիրիլեան ամբոցներ — Անաւարդա.

ԱՐՏԱԻԱԶԴ ԱՐՔԵՊԻՍԿԱՊՈՍ

134

ԵՐԱԺՇՏԱԳԻՏԱԿԱՆ

— Երաժշտութեան պատմութիւնը.

ՕՆՆԻԿ ՈՒՂՈՒՐԼԵԱՆ

137

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

— Փոխան ծաղկեպսակի...

Կ. ՓԱՓԱԶԵԱՆ

140

— Տաղ արձանութեան.

Պ. ՅՈՒՆԱՊ

141

Յոգեպար Արժ. Տ. Մեսրոպ Ա. Քհնյ. Քեօզեքեան.

142

Գեղունի.

143

ՏԻՐՈՒՆԻ

— Յարութիւն Կիւլպեկեան.

143

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԵՆ

— Ամսօրեայ լուրեր.

144

ՅԱԿՈԲ ՕՇԱԿԱՆԻ

ՅՈՒՆԱՊԶԱՆԷ

Ընդառաջելով ինքագործեան հասնող բազմաթիւ առաջարկներուն, կը ստանձնենք նախաձեռնութիւնը Յուշարձանի մը շինութեան, Յակոբ Օշականի հողակոյտին վրայ, եւ այսու կոչ կ'ընենք ողբացալ մեծ գրագէտին հիացողներուն, աշակերտներուն եւ իր յիշատակը յարգող գրասէր հասարակութեան, որպէսզի նիւթական արտաբոյժ նուիրենք յիշատակին արժանապայել Յուշարձանի մը շինութիւնը.

Հաւատարմութեամբ պիտի կեդրոնանան Քերիոյ քեւին Առաջնորդ Զարեհ Մորազանին մօտ, որ Օշականի հարազատներուն յպոճակով կարգուած է կատարար՝ ողբացալին բողոք գրական եւ նիւթական ծառանդութեան.

Այս առիթով կոչ կ'ընենք նաեւ արտասահմանի հայ արուեստագէտներուն, որպէսզի պատշաճեան Օշականի յուշարձանին նախագիծը եւ, մրցակցական հիմունքով, նուիրենք հասցենք ինքագործեան: Նախագիծերը մեզի հասած պիտի է ըզրան միևնրէ Մայիս ամսուան վերջը, որմէ ետք պիտի ենթարկուին Սիւրիոյ եւ Լիբանանի մատուցական ընտրանքին կազմուած յանձնախումբի մը զննաստույն, առ ի ընտրութիւն եւ իրագործում:

ՆԱՅԻՐԻ

ՄԵԾԱՅԱՐԳ ՏԵԱՐԲ

Հինգ տարի է որ ծնունդ առած է Հայ Ազգային Հիմնադրամը և հակառակ համաշխարհային պատերազմին և անոր հետեւող դժուարին պայմաններուն, կրցած է՝ յարաբերաբար կարճ ժամանակի մը մէջ, ձեռք բերել մեծ յաջողութիւններ իր ուսանողական, հրատարակչական և ընդհանրապէս մշակութային ամէն ձեռնարկներուն մէջ:

Իր սաները մեծ յառաջդիմութիւններ արձանագրած են Սուրիա-Լիբանանի և Ֆրանսայի մէջ: Անոնց մէջ կան իրենց ուսումը արդէն իսկ աւարտած և ընկերային փիտութեանց մէջ բարձրագոյն տիտղոսներու արժանացած երիտասարդ ուժեր: Կան շատ խոստմնալից ընծայացուներ՝ մեր կրօնական ասպարէզին համար: Կան ուրիշներ ալ՝ որոնք իրենց ուսմանց շրջանը լրացնելէ ետք մեկնած են Ս. Հայաստան, հոն, իրենց ամբարած գիտութիւնը ի սպաս դնելու մեր Մայր-Հայրենիքի վերելքին:

Գալով մեր հրատարակչական գործին, արդէն բազմաթիւ պատմական, կրթական, քննադատական, գեղագիտական ևն. երկեր լոյս տեսած են, այսու ճոխացնելով Հայ Մատենաշարը:

Ունեցանք նուիրատուներ, կտակարարներ, մեկկենաներ որոնց շնորհիւ մօտաւորապէս 30,000 Եգիպ. Ոսկիի անձեռնմխելի գումարի մը հասած է մեզի վստահուած դրամագլուխին յանձնանձումը:

Վաւերացուած Եգիպտական Կառավարութենէն ու վայելելով անոր բարձր ու բարեխնամ հովանաւորութիւնը, Հայ Ազգային Հիմնադրամը կը ներկայանայ այսօր իբր արտասահմանի հայկական ամենակարեւոր մշակութային-ընկերային կազմակերպութիւններէն մին, որ կը լեցնէ մեծ պակաս մը, և որ կողուած է մեր վաղուան ղեկավար ուժերը պատրաստելու կրթո-հասարակական ամէն մարդերուն մէջ, ղեկավար ուժեր՝ որոնց սովոր անուելի համեմատութիւններու հասած է ամէն Հայ գաղութներու մէջ:

Մեծ է սակայն թիւը ուսումնատենչ երիտասարդներուն, լոյս չտեսած լուրջ աշխատասիրութիւններուն, ինչպէս նաեւ մեծ է պէտքը նորանոր մշակութային կեդրոններու հաստատման կամ արդէն գոյութիւն ունեցողներուն հզօրացման:

Մեծ է՝ միւս կողմէ, ուժացումի և օտարացումի վտանգը Սփիւռքի մէջ ցրուած և հոն չմտլու դատապարտուած Հայութեան:

Պէտք է ուրեմն մրցիլ ժամանակին հետ և պայքարիլ նմանօրինակ տարրալուծիչ վտանգներուն դէմ՝ արագօրէն և զործնական մեթոտներով:

Ահա՛ թէ ինչու պէտք կը զգանք կրկին և կրկին կող ընելու մեր հանուր համահիւրներուն, որպէսզի զօրավիզ ըլլան մեզի ամէն կարելի միջոցներով:

Ըսինք արդէն թէ մօտաւորապէս հինգ տարի կ'ընէ որ կազմուած է Հայ Ազգային Հիմնադրամը: Արդ, զո՞ր ըլլալով հանդերձ ցարդ եղած ժամանակութիւններէն, կը մտածենք թէ, եթէ արտասահմանեան մօտ 100 քաղաքներու մեր համակիրները տարին մէյ-մէկ ձեռնարկ կազմակերպած ըլլային հիմնարկիս ի նպաստ, և եթէ ամէն մէկ ձեռնարկ միջին հաշուով 50-ական ոսկի բերէր, այժմ կ'ունենայինք 25,000 ոսկիի յաւելեալ դրամագլուխ մը՝ որուն տոկոսներով ի վիճակի կ'ըլլայինք նորանոր նուաճումներ արձանագրել:

Վտանգը. — Տոմային կրթութեամբ օժտուած ղեկավար-մտաւորականներու պակաս հայկական գաղութներու մէջ, պակաս՝ որ զէպի արագ տարրալուծում կը տանի արտասահմանի Հայութիւնը:

Դարմանը. — ա) — Ստեղծել և պահպանել այդ մասնայատուկ մտաւորականութիւնը՝ որպէսզի ան փոխանակ եսասիրօրէն ազատ ասպարէզներու հետեւելու, կարեւնայ ամբողջովին նուիրուիլ ազգապահպանման սուրբ գործին: Բ) — Լոյս ընծայել այն պիսի հրատարակութիւններ՝ որոնց բնոյթը ըլլայ դիւրացնել վերոյիշեալ մտաւորականներուն դժուարին և փրկարար գործը:

Միջոցը. — Ամէն կերպով ուժ տալ Հայ Ազգային Հիմնադրամին կրթական, հրատարակչական, ընկերային և մշակութային ձեռնարկներուն:

Կը մնանք յարգալիք բարեւներով և կանխաշայտ շնորհակալութիւններով

Ձերդ՝ Ի դիմաց ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

Վարիչ Մարմնոյ

ԲԱՐԱՋԱՆ ԷՕԺԷՆ, ԿՈԿԱՆՆԱՆ ԼԵՒՈՆ, ՄԵՐՃԱՆՆԱՆ ՏԻԳՐԱՆ,
ՏԵՓՈՑԵԱՆ ՊԵՏՐՈՍ, ԹՈԳՒԱՔԼԵԱՆ ՄԻՀՐԱՆ

ԻՆՉՊԷՍ ԿԱՐԵԼԻ Է ՕԳՆԵԼ

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ

1. — Ծնունդներու, նշանախօսութեանց, ամուսնութեանց կամ մահերու և զանազան այլ առիթներով նուէրներ տրամադրել, բարեկամ թերթերու միջոցաւ; ի նպաստ

«Հայ Ազգային Հիմնադրամ» ին:

2. — Օժանդակել Հ. Ա. Հ. ի տարեկան հասութարքը ձեռնարկներուն:

3. — Անդամագրուիլ Հ. Ա. Հ. ին, ամսական առնուազն 10 ծգ. դահեկանով:

4. — Պատուոյ անդամ (նուազագոյն 100 ծգրդ. Ոսկի)

կամ Բարեբաւ անդամ (նուազագոյն 500 ծգրդ. Ոսկի)

արձանագրուիլ Հ. Ա. Հ. ին:

5. — Մեկնեսա հանդիսանալ Հ. Ա. Հ. ի որեւէ մէկ հրատարակութեան:

6. — Որդեգրել Հ. Ա. Հ. ի սան մը:

7. — Օրինական կտակ մը ձգել Հ. Ա. Հ. ին:

8. — Անձնական ապահովագրութեան բոլիս մը արձանագրուիլ փոքր սակով մը, ամբողջ կեանքի հիման վրայ, ի նպաստ Հ. Ա. Հ. ին:

9. — Ստեղծել մշակութային որեւէ հիմնարկ, անոր յանձանձումը վստահելով Հ. Ա. Հ. ին:

10. — Քաջալերել իր հրատարակչականը, հետզհետէ գնելով անոր լոյս ընծայած հրատարակութիւնները և անոր ի նպաստ բորբակաւ ընելով:

Մեծ կամ փոքր ամէն նուիրաբերում շնորհակալութեամբ կ'ընդունուի:

Վարիչ Մարմին

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

1948-ի “ՍԻՈՆ,” ԿԸ ՆՈՒԻՐԷ

Յւրոպայի բնմին Կարողիկոսական Պատուիրակ Բարձրաւորն Յ. Արաւազգ
Սրբ. Արքեպիսկոպոս Սիւրմէյեան

Տխար Թ. Մարկոսեանին (Կրէնօպլ):

» Ե. Հիւսիսեանին (Միլան):

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ՀԱՏԸՆՏԻՐ ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻՑ՝ Մ. Ե. Ն.

Բ. ՅԱԿԳՐԱՅԻՆԻՆ

Էջ 247

Գին 15 Պաղես. Դանեկան

“SION,” an Armenian Monthly of Religion, Literature and Philology

Printed in

JERUSALEM — PALESTINE